

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԽԱԶԱՏՐՅԱՆ ԼՈՒՍԻՆԵ ԱՐՄԵՆԻ

ՄԻՆԻՑԱՐՅԱՆՆԵՐԻ «ԲԱ.ՋՄԱԿԷՊ» ՀԱՆԴԵՍԸ
(1843-1880-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐ)

ժ. 01. 06 - «Ժուռնալիստիկա» մասնագիտությամբ բանասիրական
գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման
ատենախոսության

Ս Ե Ղ Մ Ա Գ Ի Ր

Ե Ր Ե Վ Ա Ն - 2012

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում:

Գիտական ղեկավար՝

բանասիրական գիտությունների
թեկնածու, դոցենտ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՆԱՂԱՇ ՆԱՐԻՆԲԵԿԻ

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

պատմական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր,
ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ

ԽԱՌԱՏՅԱՆ ԱԼԲԵՐՏ ԱՐՄԵՆԱԿԻ

բանասիրական գիտությունների
թեկնածու

ՀՈՎԱԵԹՅԱՆ ՄԱՐԻԱՄ ՎՈԱՄԻ

Առաջատար կազմակերպություն՝

Հայ-Ռուսական (Սլավոնական)
համալսարան

Պաշտպանությունը կայանալու է 2012 թ. մայիսի 30-ին՝ ժամը 14³⁰-ին, ԵՊՀ-ում գործող՝ ԲՈՂ-ի գրականագիտության 012 մասնագիտական խորհրդի նիստում:

Հասցեն՝ ք. Երևան 25, Աբովյան 52^ա, ԵՊՀ-ի հայ բանասիրության ֆակուլտետի մասնաշենք, թիվ 202 լսարան:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ԵՊՀ-ի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2012թ. ապրիլի 27-ին:

Մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար՝
բանասիրական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր

ԱԼ. Ա. ՄԱԿԱՐՅԱՆ

natural and humanitarian science, to reveal the novelties in the realm of art and culture, to acquaint its readers with the most significant public issues and events and to satisfy the interests of the Armenian new readers. It is noteworthy that the first editors and employees of "Bazmavep" had first of all tried to echo the vital needs of the secular Armenian readers. Only this fact can explain the language policy of the magazine which differs from the ones used in the periodicals that were published earlier. The language of "Bazmavep" is not the ashkharabar "mixed with the language of the villagers". Instead it is the language that was used by the West Armenian intellectuals at the first decade of the 19th century, though it was not fully composed as a literary language.

The **second chapter** entitled ("The Issues of Spiritual-Cultural and National Life") has four divisions and is devoted to the elucidation of spiritual culture thoroughly depicted in the pages of "Bazmavep", to the comments on national issues and comprehension of Armenian language and also to the analysis of the Italian reality in the context of the periodical.

Here the author particularly emphasizes the fact that the aim of "Bazmavep" was to satisfy the demands of all the readers who were of various levels. For that purpose it printed articles concerning different problems, i.e. historical-political, historical-philological, scientific and industrial, commercial and agricultural as well as economic studies. The pages of the magazine were also full of materials on folklore, fables and admonitions. The materials devoted to fiction and translation as well as debates were prevailing. The magazine "Bazmavep" realized two important cultural actions. First of all it bridged the Armenian ancient and medieval culture with the contemporary art and literature. Then due to the magazine the aesthetic views of Armenian classicism and Armenian romanticism were formed and got new appearance, i.e. views which remained dominating to this or that extent during the whole 19th century.

The last **third chapter** of the dissertation entitled ("The Literary-Translating Policy of "Bazmavep") is devoted to the study of the literary and translating policy held by the written organ of the Mkhitarists' Abbey in Venice.

In this chapter it turns out that one of the best pages in "Bazmavep" is the section dealing with translations. The list of the publications concerning literary-translations is big and various. The periods included in them is also very big: it includes ancient times up to the European, American, even Chinese literature of its period. the genre encompass is also very large: fables, proverbs, poems, comedies, anecdotes, folklore works, sketches, publications and so on.

By mastering a number of new and old European languages the Mkhitarists with the help of "Bazmavep" in the modern period did the thing which can be only compared with the heroism done by blissful translators of the fifth century. The Mkhitarists' translations prepared the birth of the New Armenian literature and also put it on the new road since the first classicists (Arsen Bagratuni, Havhan Vanandetsi and etc.), the first romanticists (Ghevond Alishan, Mkrtych Peshikdashlyan, Petros Duryan) up to Daniel Varuzhan and Siamanto, Misak Metsarets and Ruben Sevak.

In the **conclusion** the main concludes are given.

In the final part of the dissertation the **bibliography** is attached.

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Ատենախոսությունը նվիրված է հայ ամենաերկարակյաց պարբերականի՝ Վենետիկի Մխիթարյանների «Բազմավեպ» հանդեսի զարգացման երեք շրջափուլերի համակողմանի ուսումնասիրությանը: Այն նախ ընդգրկում է հանդեսի 1843-1857 թթ. գործունեության վերլուծությունը, երբ պարբերականը բնական, տնտեսական ու բանասիրական երկչաբաթաթերթ էր և նպատակ ուներ դյուրըմբռնելի աշխարհաբարով ընթերցողին ներկայացնել լուսավորական գաղափարներ և օգտակար խորհուրդներ, ուղիներ մատնանշել տնտեսական, քաղաքական և հոգևոր կյանքի վերածնման համար, ապա՝ 1858-1872 թթ., երբ «Բազմավեպը» վերափոխվել է ամսագրի և աստիճանաբար սահմանափակել բնական և տնտեսական գիտելիքներին հատկացվող էջերը՝ փոխարենը լայն ասպարեզ տալով գրական-գեղարվեստական նյութերին, համաշխարհային գրականության լավագույն էջերի թարգմանությանը, և, վերջապես, 1872-1882 թթ., երբ «Բազմավեպը» վերածվել է եռամսյա ուսումնաթերթի: Այս շրջանում ավելացել են հայագիտական՝ պատմական, բանասիրական, լեզվաբանական, տեղագրական, մատենագիտական ուսումնասիրությունները:

Անուրամալի է «Բազմավեպի» կատարած կարևորագույն դերը հայագիտության համար: Այսօր ևս հանդեսի էջերում կան հայ գաղթօջախների, արևմտահայ գրականության, պատմության և մշակութային արժեքների հետազոտության համար վավերագրական և աղբյուրագիտական անփոխարինելի հսկայական նյութեր: Մեծ էր «Բազմավեպի» ներդրումն անցած սերունդների ստեղծագործական ժառանգության պահպանման, զարգացման և փոխանցման հարցում:

Հանդեսը հրապարակման օրվանից մշակեց իր գործունեության ծավալը և ուղղությունը, բազմաթիվ խնդիրներ ու կարևոր նպատակներ դրեց իր առջև, որոնք իրագործում էր հետևողականորեն՝ անկախ միմյանց փոխարինող խմբագիրների ճաշակից ու աշխարհայացքից, դրա հետ մեկտեղ, ժամանակի պահանջների համեմատ, դրսևորելով ճկունություն: «Բազմավեպն» ընդգրկում էր ոչ միայն ներագային խնդիրներ, այլև արձագանքում էր համաշխարհային իրադարձություններին: Այդ տեսակետից ատենախոսության մեջ զանց չեն առնվել հայ լրագրության պատմությունն ամբողջացնելու տեսակետից պատկառելի ու բավական հետաքրքիր նյութեր պարունակող հանդեսի՝ նաև աշխարհում ընթացող կարևոր իրադարձություններին (բնական և հումանիտար գիտությունների նվաճումներ, արվեստի և մշակույթի նորություններ, համրային-քաղաքական առավել կարևոր խնդիրներ ու իրողություններ) նվիրված հաղորդագրությունները...

ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻՎԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՈՒ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Թեմայի արդիականությունն ամենից առաջ պայմանավորված է այն խոր հետաքրքրությամբ, որ վերջին ժամանակներս վերստին ցուցաբերվում է անցյալի հայ պարբերական մամուլի նկատմամբ: «Բազմավեպի» նման ծանրակշիռ հանդեսի գործունեության ուսումնասիրությունն այսօր արդիական է բոլոր առումներով: Ուշագրավ են ոչ միայն հանդեսի արժարժան խնդիրներն ու դրանց մատուցման եղանակները, այլև այն անձինք, ում ջանքերով կայացել է հանդեսը. նախ և առաջ՝ խմբագիրները, ովքեր ուսյալ, բազմիմաց ու հայրենասեր, ազգանվեր գործիչներ էին, հեղինակները, որ նախանձախնդիր էին իրենց տողի ու մտքի հանդեպ, մարդիկ, ովքեր մշակեցին հանդեսի սկզբունքներն ու անդամավաճան հետևեցին նրան: Հատկապես այժմ, երբ ազգային ինքնության ու ազգային միասնության հիմնախնդիրն աննախընթաց կարևորություն է ստացել: Ուստի «Բազմավեպի» դերակատարության վերարժևորումը արդիականութ-

յան համապատկերում հնարավորություն է տալիս հետևելու և գնահատելու արդի լրագրագիտական մի շարք հայեցակարգերի կայացման գործընթացը:

Արդյունաբերության զարգացմանը համընթաց՝ XIX դարում խորագույն տեղաշարժեր են արձանագրվում նաև մամուլի բնագավառում: Տեղեկատվության պահանջը դառնում է էլ ավելի տարաբնույթ ու արտահայտված, որի համապատկերում ձևավորվող «ընթերցող հանրույթը» փնտրում է իր մշակութային-բանական հետաքրքրությունները բավարարող նորանոր աղբյուրներ: Այսպիսով՝ մամուլը զարգանում է իրականության բարդ երևույթների ներգործության ներքո՝ արտացոլելով իր համար նոր հիմնախնդիրներ և դրանց լուծման փնտրտուքների ուղիներ: Ռեբերտ Պրուտցի բնորոշմամբ՝ մամուլը դարաշրջանի յուրօրինակ «օրագիր» է, ուր վերջինս ամենօրյա գրառումների միջոցով իր ընթացիկ պատմությունն է ներբերում՝ քննադատելով և գնահատելով այն: Ըստ այդմ, լրագրությունն ինքնին դարաշրջանի՝ ինքն իր հետ ունեցած երկխոսությունն է, որի համապատկերում բացահայտվում են ժամանակի առավել թաքուն կենսական ռիթմերը:

Այսպիսով՝ այն, ինչն արդիական է իր ժամանակին, ինչը ճշմարիտ ու անխարդախ լուսաբանում է ժամանակի խնդիրներն ու կարևոր հարցեր քննում, արդիական է դառնում և հետագա ժամանակներում: Որպեսզի հասկանանք, թե այսօր ինչ է մեզ պետք մեր առջև ծառայած բազում խնդիրներ լուծելու համար, անհրաժեշտ է գիտական և հետազոտական անդրադարձ կատարել ուսանելի օրինակներին: Այս համապատկերում իր ուրույն տեղն ու դերն ունի «Բազմավեպ» հանդեսը: Հիմնադրման ժամանակից (1843) մինչև մեր օրերը այն աչքի է ընկել ազգանվեր գործունեությամբ: Անչափ լայն է հանդեսի ընդգրկած թեմատիկ շրջանակը. նախ՝ հայագիտություն, ապա՝ մատենագիտություն, ինքնուրույն և թարգմանական գրականություն, գրականագիտություն, պատմություն, ճարտարապետություն, արվեստաբանություն, լեզվաբանություն, քաղաքագիտություն, նույնիսկ ճշգրիտ գիտություններ և այլն: Ընդ որում, տասնյակ էջեր կարող են կազմել այն մվիրյալների անունները, ովքեր խմբագրել, թարգմանել, աշխատակցել են հանդեսին:

Սույն ուսումնասիրությունը՝ որպես անդրամիկ փորձ, կարող է հիմք դառնալ հայ մամուլի պատմությունն առավել խոր լուսաբանող հետագա հետազոտությունների համար: Այն գիտագործնական առումով կարող է օգտակար լինել հայ ժողովրդի պատմության, գրականության և ընդհանրապես մշակույթի բնագավառների հետազոտողների, ինչպես նաև բուհերի լրագրության ֆակուլտետների դասախոսների և ուսանողների համար:

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԱՈՒՐԿԱՆ, ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ուսումնասիրության առարկան հայ լրագրության պատմության մեջ էական տեղ զբաղեցրած «Բազմավեպ» հանդեսի անցած ճանապարհի գիտական արժևորումն ու ամբողջական ուսումնասիրությունն է:

Արգասավոր ուղի անցած երկարամյա պարբերականը, չնայած իր կաթոլիկական կրոնակրթական ուղղվածությանը, անտարակուսելիորեն միտված էր նոր ժամանակների հեռանկարում հայ համակեցական կյանքը վերակազմակերպելուն: Այն բնականաբար սերտ առնչություններ է ունեցել կենսական հարցերի հետ, արձագանքել հայրենի ժողովրդի հանրային-քաղաքական, սոցիալ-հոգեբանական, կրոնաբարոյական ու գրական-մշակութային այրող և տազնապահարույց խնդիրներին, որոնցով այնքան հագեցած էր 19-րդ դարը: Դրա հետ կապված՝ աշխատանքում փորձ է արվել նաև որոշել «Բազմավեպի» տեղն ու դերը ժամանակի հրա-

Khachatryan Lusine A.

“The Mkhitarists' Magazine "Bazmavep" (1843-1880of)” Dissertation to obtain the degree Doctor of Philosophy in the field of Journalism 10.01.06

**Defense day: May 30, 2012, 14.30 pm at the VAK specialized Council 012 under the
Yerevan State University.**

**Address: Yerevan 52/A Abovyan str., YSU, Faculty of Armenian Philology, room N
202**

Summary

The dissertation is devoted to the thorough study of the three periods of development of the long-lived Armenian periodical published in the Venice Abbey and entitled "Bazmavep". The author studied the period between 1843-1857 when "Bazmavep" a natural, economic and philological periodical was published at two weeks interval aiming to deliver to its readers enlightening ideas and useful advices written in easily understood ashkharabar. During this period the periodical also pointed ways for economic, political and spiritual revival. In 1858-1872 the periodical "Bazmavep" turned into a magazine and gradually limited its pages devoted to natural and economic knowledges and instead of them it gave broad realm to the materials concerning literary-fiction and the best translations of world literature. In its last period dating 1872-1882 the magazine "Bazmavep" turned into curriculum paper which was published once in three months. In this period Armenological "studies devoted to history, philology, linguistics, topography and bibliography" had a high rise.

No one can ignore the great role of "Bazmavep" in the development of Armenology. Even today in its pages the magazine covers huge materials dealing with Armenian colony, West Armenian literature, documental and source information ones which have irreplaceable values for investigating history and culture.

In **Introduction** the author briefly presents the history of the issue under study, the aims and problems of the dissertation, the methodological basis of the work, the modernism and scientific novelty of the theme are also substantiated.

The **first chapter** entitled ("Bazmavep" and its Editors") consists of subchapters where the author in succession studies the birth and essential provisions of "Bazmavep" as well as the activity of the most famous editors. Here the author of the dissertation also pays attention to the literary policy of the magazine in the period of 1843-1880 and also to the evaluation of the given periodical in the pages of the Armenian press.

One of the most essential concludes done in this chapter is that the magazine "Bazmavep" was founded by taking into account the experience of its predecessors ("Taregrutjun", "Eghnak Bjuzandian" and "Ditak Bjuzandian"). By being a mass media and due to its work the magazine had the mission of fulfilling its leading functions, that is, to inform the public readers about the important events which took place in the world, to introduce the achievements in the field of

событиями и удовлетворить интересы нового армянского читателя. Примечательно, что первые редакторы и работники «Базмавепа» прежде всего стремились откликнуться на жизненные требования мирского армянского читателя. Только этим можно объяснить языковую политику журнала: в отличие от более ранних периодических изданий язык «Базмавепа» - это язык западноармянской интеллигенции первых десятилетий 19-го века, хотя последний пока еще полностью не был сформирован как литературный язык.

Вторая глава («Проблемы духовно-культурной и национальной жизни»), содержащая четыре раздела, посвящена многостороннему комментированию отраженных в «Базмавепе» проблем духовной культуры, национальных проблем, проблем восприятия армянского языка и анализу журнала в контексте итальянскоцкой действительности.

Здесь, в частности, акцентируется тот факт, что «Базмавеп» имел целью удовлетворить требования широкого круга читателей. В соответствии с этим он помещал на своих страницах общественно-политические, историко-филологические и производственные статьи, статьи, посвященные проблемам торговли и земледелия, экономические исследования. Страницы журнала были заполнены также фольклорным материалом, баснями и поучениями. Значительное место отводилось литературному и переводческому материалу, дискуссиям. «Базмавеп» осуществил два важных культурных действия: во-первых, соединил древнюю и средневековую армянскую культуру с литературой и искусством нового времени, затем в журнале сформировались и приобрели новый облик эстетические взгляды армянского классицизма и армянского романтизма – принципы, которые в той или иной мере оставались преобладающими в течение всего 19-го века.

Последняя, третья глава диссертации («Литературно-переводческая политика «Базмавепа») посвящена исследованию литературной и переводческой политики, проводимой печатным органом Мхитарянского братства Венеции.

В этой главе выявляется, что лучшими страницами «Базмавепа» является переводческий раздел. Список литературно-переводных изданий журнала широк и разнообразен. Широк также охваченный период: начиная с античного периода до европейской, американской и даже китайской литературы времени своего издания. Многообразен и жанровый охват: басни, поговорки, стихи, отрывки из эпопей и трагедий, рассказы, миниатюрные романы, комедии, анекдоты, фольклорные произведения, очерки, публицистика и т.д.

Владея рядом древних и новых европейских языков, в новое время в рамках «Базмавепа» Мхитаряны совершили то, что сравнимо только с подвигом замечательных переводчиков пятого века. Переводы Мхитарянов подготовили и поставили на прочный путь новую армянскую литературу: начиная с первых классицистов (Арсен Багратуни, Ован Ванандеци и др.) и первых романтиков (Гевонд Алишан, Мкртич Пешикташлян, Петрос Дурян) до Даниела Варужана и Сиаманто, Мисака Мецаренца и Рубена Севака.

В заключении диссертации даются основные выводы и список использованной литературы.

պարակազրական գործընթացներում, վերլուծել նրա փոխհարաբերություններն ու աղերսներն այլ պարբերականների հետ:

Վերոնշյալ նպատակներով էլ պայմանավորվել են հետազոտության հետևյալ խնդիրները՝

- բացահայտել հայ մամուլի պատմության մեջ «Բազմավեպ» հանդեսի խաղացած դերն ու նշանակությունը,
- վեր հանել հանդեսի էջերում հրապարակված խմբագրականների ներուժը՝ հիմք ընդունելով առկա սոցիալ-մշակութային իրավիճակը,
- առանցքային այդ մեկնակետերից վերլուծել և մեկնաբանել հանդեսում արժարժված հոգևոր-մշակութային և ազգային կյանքի հիմնախնդիրները,
- այս համապատկերում բացահայտել հանդեսի գրական քաղաքականության կենսագործման եղանակները:

ԹԵՄԱՅԻ ՄՇԱԿՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹԸ

«Բազմավեպ» հանդեսը երկար տարիներ զբաղեցրել է հայ գրական-մշակութային, ինչպես նաև հանրային-քաղաքական միտքը. գրվել են արժեքավոր բազմաթիվ ուսումնասիրություններ, որոնց մեջ փորձ է արվել տարբեր տեսանկյուններից բացահայտել ու արժևորել Մխիթարյանների գաղափարներն ու հանդեսի բովանդակությունը: Այդ առիթով ամենից առաջ հիշարժան են Յ. Գրիգորիս Վ. Գալենքարյանի, Գ. Լևոնյանի և Ս. Հովսեփյանցի աշխատությունները¹:

Վ. Գալենքարյանն իր աշխատության մեջ փորձում է գաղթօջախների հոգևոր կյանքի հիման վրա արժևորել խնդրո առարկա մի քանի պարբերականների գործունեությունը, որոնց թվում և «Բազմավեպի» որոշ էջեր: Հատկանշական է, որ նա հայ մամուլի առաջին պատմաբաններից էր², որ ուշադրություն դարձրեց նաև պարբերականների «համազգային բովանդակությանը»: Վ. Գալենքարյանի աշխատության մեջ արժեքավոր դիտողություններ կան պարբերականի, դրա խմբագիրների գործունեության, գաղթօջախի մշակութային-հոգևոր իրականության և այլնի վերաբերյալ: «Բազմավեպին» մվիրված տեքստի վերջում նա ի մի է բերում դրա համազգային բովանդակությունը՝ ցույց տալու համար, թե հեռավոր հայ գաղթօջախի իրականությունն ու պատմությունն ինչ հեռանկարում են լծորդվում ընդհանուր հայկականին: Աշխատության մեջ թեև տեղ են գտել և բազմաթիվ անճշտություններ, այնուամենայնիվ դրանք չեն նսեմացնում հեղինակի՝ այս բնագավառում արած լուրջ ներդրումները:

Գ. Լևոնյանի աշխատությունն ընդհանուր առմամբ քիչ բան է հավելում իր նախորդների կողմից կատարված հետազոտություններին: Դրանում համեմատաբար քիչ են վերլուծությունները, ինչպես նաև մեկ ընդհանուր, համահարթ շրջանակում են դիտարկվում պարբերականների խմբագիրների գաղափարներն ու պարբերականների առանձնահատկությունները:

Ուսումնասիրվող հիմնախնդրի վերաբերյալ գիտական գրականության մյուս մասն էլ ստեղծվել է արդեն XX դարում և XXI դարասկզբին: Այս շարքում հարկ է նշել

¹ Տես Յ. Գրիգորիս Վ. Գալենքարյան, Պատմություն հայ լրագրության, Վիեննա, Մխիթարյան տպարան, 1893, Գ. Լևոնյան, Հայ պարբերական մամուլը, Ալեքսանդրապոլ, 1895; Ս. Հովսեփյանց, Ընդհանուր ցանկ նյութոց ... Վեներիկ, 1896:

² Առաջինը համարվում է Գ. Ջարրիանյանը:

Ա. Կարինյանի, Մ. Ճանաչյանի աշխատությունները³: Հետաքրքիր է նաև «Հայ պարբերական մամուլի պատմություն. XVIII-XIX դարեր» աշխատությունը, ուր ընդարձակ հոդված է նվիրված «Բազմավեպի» կազմավորման և կայացման գործընթացին⁴:

Բացի խիստ մասնագիտական աշխատություններից՝ «Բազմավեպին» վերաբերող բազմաթիվ խնդիրներ զնահատությունների ու վերլուծությունների են արժանացել այլ աշխատություններում ևս: Այս առումով որոշակի հետաքրքրություն են ներկայացնում Մ. Նալբանդյանի, Ա. Չոպանյանի, Ղ. Աղայանի, Հովհ. Թումանյանի, Մ. Արեղյանի, Հ. Օշականի, Ս. Սարինյանի, Ա. Խառատյանի և այլոց աշխատությունները⁵:

Ինչպես տեսնում ենք, «Բազմավեպի» մասին ստեղծվել է բավականաչափ գրականություն, բայց և այնպես բաց են մնացել բազմաթիվ խնդիրներ, ուստի առաջացել է այդ բացը լրացնելու և խնդիրները նորովի ու ամբողջական քննելու անհրաժեշտություն: Եվ սույն ատենախոսությունը մի փորձ է՝ ծավալուն աշխատության սահմաններում բազմակողմանի ներկայացնելու հայ ամենաերկարակյաց պարբերականի անցած արժանավոր ճանապարհը:

Ատենախոսության նպատակին հետամուտ՝ «Բազմավեպի» և մասնավորապես նրա խմբագիրների գործունեության ու խմբագրականներում արժարժված հայեցակարգերի վերլուծությունից հանգել ենք գիտական հետևյալ հիմնական նորոյթների.

- XIX դարի կեսերի հայ մամուլի պատմության ու տեսության համատեքստում «Բազմավեպ» հանդեսը ուսումնասիրել ենք որպես հայ ազգի արդիականացման այլընտրանքային ճանապարհ:
- «Բազմավեպի» էջերում հրապարակված խմբագրականների փոխակերպությունների համայնապատկերի վրա ցույց է տրվել, որ այն նոր հայեցակարգերի մշակման «կոլեկտիվ ստեղծագործության միջավայր» էր:
- Վերլուծվել են «Բազմավեպում» հոգևոր-մշակութային և ազգային կյանքի հիմնախնդիրների լուսաբանումները:
- Հատուկ ուշադրություն է դարձվել ազգային գրականությունից զատ թարգմանաբար ներկայացվող օտարազգի ժամանակակից և անվանի գրողների ստեղծագործությունների վերլուծությանը, այլ կերպ ասած՝ գրական-թարգմանական քաղաքականությանը:
- Հետազոտական հիմնարար մեթոդի դիտանկյունից՝ փորձ է կատարվել «Բազմավեպի» ծավալած գործունեությունը վերլուծել իտալական իրականության համապատկերում:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՍԱԿԱՆ-ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՍՔԸ

Ատենախոսության մեջ ավանդական՝ պատմամշակութային մոտեցման հետ միասին կիրառվել են համեմատական-տիպաբանական մեթոդները, հրապարա-

³ Տե՛ս Ա. Կարինյան, Ավնարկներ հայ պարբերական մամուլի պատմության, հ. 2, Ե., Հայկական ՍՍՌ ԳԱ հրատ., 1960, Մ. Ճանաչյան, «Բազմավեպ»ի յոթելեանը եւ անոր նշանակությունը, Գեղունի, 1947:

⁴ Տե՛ս «Հայ պարբերական մամուլի պատմություն», XVIII-XIX դարեր, հ. 1, Գահիրե, 2006:

⁵ Տե՛ս Մ. Նալբանդյան, Երկերի լիակատար ժողովածու, ԳԱ հրատ., 1980, Ա. Չոպանյան, Դեմքեր, Փարիզ, 1924, Ղ. Աղայան, Երկերի ժողովածու, հ. 3, Ե., 1963, Հովհ. Թումանյան, Երկերի ժողովածու, հ. 4, Ե., 1959, Մ. Արեղյան, Հայոց հին գրականության պատմություն, հ. 2, Ե., 19.., 3. Օշական, Համապատկեր արևմտահայ գրականութան, հ. 2, Երուսաղեմ, 1953, Ս. Սարինյան, Հայկական ռոմանտիզմ, Ե., ԳԱ հրատ., 1966: Ա. Խառատյան, Հասարակական միտքը Ջնյունիայի հայ պարբերական մամուլում (1840-1900), Ե., ՀՀ ԳԱԱ, «Գիտություն», 1995:

Хачатрян Лусине Арменовна

«Журнал «Базмавеп» Мхитарянов (1843-1880 годы)»

Диссертация на соискание ученой степени кандидата филологических наук по специальности 10. 01. 06. «Журналистика».

Защита состоится 30 мая 2012г. в 14³⁰ на заседании Специализированного Совета ВАК 012, действующего по адресу: г.Ереван, ул.Хачатура Абовяна 52/А, ЕГУ, корпус филологического факультета, аудитория 202.

Резюме

Диссертация посвящена разностороннему исследованию развития трех периодов самого долголетнего периодического издания – журнала «Базмавеп» Мхитарянов: 1843-1857 гг., когда он являлся естественной, экономической и филологической газетой-двухнедельником, имеющей целью посредством легкодоступного ашхарабара довести до читателя просветительские идеи и полезные советы, наметить пути возрождения политической и духовной жизни; 1858-1872гг., когда газета «Базмавеп» была преобразована в журнал и постепенно ограничила количество страниц, отведенных на естественные и экономические знания, предоставляя взамен широкую сферу литературно-художественному материалу, переводу лучших образцов всемирной литературы; наконец, 1872-1882 гг., когда «Базмавеп» был преобразован в трехмесячную учебную газету. В этот период возросло количество «исторических, филологических, лингвистических, топологических, библиографических исследований».

Неоспорима и важна роль «Базмавепа» для арменистики. Даже сегодня на страницах журнала есть богатый незаменимый документальный и источниковедческий материал для изучения исторических и культурных ценностей армянских колоний, западноармянской литературы. Велик был вклад «Базмавепа» в деле хранения, развития и передачи творческого наследия прошлых поколений.

Во введении коротко представлены история вопроса, цели и задачи исследования, методологическая основа работы, обоснованы актуальность и научная новизна темы.

В первой главе («Базмавеп» и его редакторы), которая состоит из трех подглав, последовательно исследуются зарождение и исходные тезисы «Базмавепа», деятельность наиболее известных редакторов, проводимая на продолжении 1843-1880-х годов литературная политика и оценка журнала на страницах прессы. Главным выводом здесь является то, что журнал «Базмавеп» создавался с учетом опыта предыдущих журналов («Тарегругюн», «Еханак Бюзандян» и «Дитак Бюзандян»). Будучи средством массовой информации журнал по стечению обстоятельств был призван осуществить свои первоочередные функции: посвятить читателя в важнейшие события, происходившие в мире, осведомить о достижениях в области естественных и гуманитарных наук, ознакомить с новостями искусства и культуры, с наиболее важными общественными проблемами и

րը, որովհետև հանդեսի նպատակը լուսավորական-կրթական էր՝ հանրության լայն զանգվածների համար նախատեսված նյութերով:

11. «Բազմավեպի» լավագույն էջերից է թարգմանական բաժինը: Հանդեսի գրական-թարգմանական հրապարակումների ցանկը մեծ է ու բազմազան: Վիթխարի է նաև ընդգրկված ժամանակաշրջանը՝ անտիկ շրջանից մինչև իր հրատարակված ժամանակների եվրոպական, ամերիկյան, անգամ չինական գրականությունը: Բազմաբղետ է նաև ժանրային ընդգրկումը՝ առակներ, առածներ, բանաստեղծություններ, հատվածներ դյուցազներգություններից և ողբերգություններից, պատմվածքներ, մանրավեպեր, կատակերգություններ, անեկդոտներ, բանահյուսական երկեր, ակնարկներ, հրապարակախոսություն և այլն:

12. Տիրապետելով եվրոպական հին ու նոր մի շարք լեզուների՝ նոր ժամանակներում Մխիթարյանները «Բազմավեպի» շրջանակներում արեցին այն, ինչ համեմատելի է միմիայն 5-րդ դարի երանելի թարգմանիչների սխրանքի հետ: Մխիթարյանների թարգմանությունները նախապատրաստեցին ու կայուն ուղու վրա դրեցին հայ նոր գրականությունը՝ առաջին կլասիցիստներից (Ա. Բագրատունի և այլք) և առաջին ռոմանտիկներից (Ղ. Ալիշան, Մ. Պեշիկթաշյան, Պ. Դուրյան...) մինչև Դ. Վարուժան ու Միամանթո, Մ. Մեծարենց ու Ռ. Սևակ...

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅՈՎ ՀՐԱՏԱՐԱՎԿԱԾ ՀՈՂՎԱԾՆԵՐ

1. «Բազմավեպը» հայ մամուլի գնահատությամբ, «Գարուն», ամսագիր, Երևան, 2010, թիվ 5-6, էջ 9-13:
2. Հոգևոր մշակույթի և ազգային խնդիրների ըմբռնումը «Բազմավեպում», «Գարուն», ամսագիր, Երևան, 2011, էջ 11-17:
3. «Բազմավեպի» առաջին խմբագիրը. Գաբրիել Այվազովսկի, «Կանթեղ» (Գիտ. հոդվածների ժողովածու), 2011, Գիրք 2 (47), էջ 34-41:

կագրական երկերի վերլուծության համակարգային ու ամբողջական վերլուծության սկզբունքը:

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՓՈՐՉԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ

Ատենախոսության հիմնադրույթներն արտացոլված են հանրապետության գիտական հանդեսներում և ժողովածուներում զետեղված հոդվածներում: Ուսումնասիրությունը քննարկվել է Երևանի պետական համալսարանի ժուռնալիստիկայի ֆակուլտետի մամուլի պատմության և տեսության ամբիոնում ու երաշխավորվել հրապարակային պաշտպանության:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Ատենախոսությունը կազմված է ներածությունից, համապատասխան տրոհումներ պարունակող երեք գլուխներից, եզրակացություններից և գրականության ցանկից:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ներածության մեջ համառոտ ներկայացված են հարցի պատմությունը, ատենախոսության նպատակներն ու խնդիրները, աշխատանքի մեթոդաբանական հիմքը, հիմնավորված են թեմայի արդիականությունն ու գիտական նորությունը:

ԳԼՈՒԽ ԱՐԱՋԻՆ

«ԲԱԶՄԱՎԵՊԸ» ԵՎ ՆՐԱ ԽՄԲԱԳԻՐՆԵՐԸ

Ատենախոսության առաջին գլուխը բաղկացած է երեք ենթագլխից:

Առաջին ենթագլխում («**«Բազմավեպի» ծնունդն ու ելակետային հիմնադրույթները**») համառոտ և ընդհանուր գծերով ներկայացված է «Բազմավեպի» ծագման, զարգացման ու կայացման գործընթացը:

XIX դարի 40-ական թվականները նոր շրջան են բացում հայ պարբերական մամուլի, հատկապես գաղութահայի պատմության մեջ: Հիմնադրման օրից Մխիթարյան միաբանությունը եղել է հայագիտության ու կրթության համահայկական խոշոր կենտրոններից մեկը: Շնորհիվ հիմնադիր Մխիթար Սեբաստացու՝ այն զուցեև աշխարհում միակ կաթոլիկ հայ համայնքն է, որ երբեք չի լատինացվել, և կրոնական բոլոր ծեսերը կատարվել են միայն հայերենով ու հայ առաքելական եկեղեցու արարողակարգերով:

Այս ամենից բացի՝ ուշագրավ է, որ գաղութահայ առաջին պարբերականները, որոնցից են «Տարեգրությունը» և «Եղանակ Բյուզանդյանը»՝ Ղուկաս Ինճիճյանի խմբագրությամբ, լույս են տեսել դարձյալ շնորհիվ Մխիթարյանների: Եվ, որ կարևոր է, վերոնշյալ հանդեսներն իրենց ընթերցողներին հորդորում էին սպառազինվել արևմտյան մշակույթի զենքերով և դրանք գործադրել անցյալի վերարժևորման նպատակով:

Գաղութահայ պարբերականների հիմնադրման պատմության մեջ Մխիթարյան միաբանության հաջորդ քայլը եղավ «Բազմավեպի» հիմնադրումը 1843 թվականին: Նոր հանդեսի գլխավոր առանձնահատկությունն այն էր, որ այն ստեղծվում էր մախորդների փորձառությունը նկատի ունենալով: Նույն միաբանության կողմից հրատարակված «Տարեգրությունը», «Եղանակ Բյուզանդյանը» և «Դիտակ Բյուզանդյանը» հայ հասարակական-մշակութային կյանքում չկարողացան կատարել այն դերը,

ինչն իրականացրեց «Բազմավեպը»: Պարբերականը, լինելով զանգվածային լրատվամիջոց, գործի բերումով կոչված էր իրականացնելու իր առաջնահերթ գործառնությունը՝ ընթերցող հանրությանը տեղյակ պահել աշխարհում ընթացող կարևոր իրադարձություններին, իրազեկ դարձնել բնական և հումանիտար գիտությունների նվաճումներին, արվեստի ու մշակույթի նորություններին, հասարակական առավել կարևոր խնդիրներին ու իրողություններին: Մամուլան, սկսած 17-18-րդ դարերից, եվրոպական հումանիտար և գիտական միտքը կրթությունն այլ կերպ չէր պատկերացնում, քան մարդու բազմակողմանի զարգացմամբ, «ազատ արվեստների» և դասական լեզուների իմացությամբ՝ ենթադրելով, որ «բառերը շատ ավելի վաղ են յուրացվում, քան գաղափարները»⁶:

Հետազոտության ընթացքում ակնհայտ է դառնում, որ Իտալիայի իրադարձությունները ևս չէին կարող պարզեցություն չթողնել հանդեսի վրա նաև հայության վիճակի հետ համանմանության պատճառով, քանի որ պատմական գործընթացի մասին փիլիսոփայական խորհրդածությունների անհրաժեշտությունը ծագում է այն ժամանակ, երբ խարխվում են ազգի գոյության հիմքերը, ավանդույթները, խախտվում է զարգացման բնական ուղին, և երբ իրողություն է դառնում սեփական իդեալները կյանքի կոչելու անհնարինությունը: Հոգևոր, մշակութային, ապա նաև ֆիզիկական ոչնչացման վտանգի առջև կանգնած, մասնատված ու մոլորված հայության համար Միսիթարյան միաբանները փորձում են ստեղծել ազգի ինքնապաշտպանության ու փրկության մի համակարգ, որն առաջնորդվում է հայոց պատմության վերահիմաստավորմամբ: Այդ պարագայում ազատության հասնելու ուղիներից կարևորն ազատ ու անկախ ապրելու հիշողության վերադարձնումը պիտի լիներ, որին և լծվեց «Բազմավեպը» առաջին իսկ համարներից:

Երկրորդ ենթագլխում («**«Բազմավեպի» խմբագիրները և խմբագրական քաղաքականությունը 1843-1880-ական թվականներին»**) ընդհանուր գծերով ներկայացված են «Բազմավեպի» խմբագիրների ծրագրային հիմնադրույթները:

1843 թվականից է սկսվում «Բազմավեպի» հրատարակումը՝ Գաբրիել Այվազովսկու խմբագրությամբ: Բավականին ծավալուն նախապատրաստական աշխատանքներ իրականացնելուց հետո պարբերականը հանդես է գալիս «մեծապես ճշգրտված ներքին քաղաքականությամբ»⁷: Իսկ շուտով նաև իրականացնում է հաջորդ վճռական քայլը. իր էջերում տեղ է հատկացնում հայ մտավորականության ամենատարբեր բնագավառների ներկայացուցիչների, որոնք ոչ միայն Միսիթարյան միաբանության անդամ չէին, այլև հոգևորական չէին, անգամ անդամակցում էին հակընդդեմ կրոնական որևէ կազմակերպության:

Պարբերականի «Բազմավեպ» անվամբ հրատարակիչներն ընդգծում էին իրենց որդեգրած քաղաքականության խորքային կայրը Դ. Ինժիյանի «եղանակ Բյուզանդյան» հանդեսի ուղեգծի հետ, որի երկրորդ վերնագիրը հենց «Բազմավեպ» էր⁸: Հետաքրքրական է, որ նոր հանդեսի կառուցվածքն ընդհանուր առմամբ չէր տարբերվում նախորդից: Այսու՝ «Բազմավեպը» սկզբնապես պարագրվում էր հետևյալ երեք թեմատիկ համալիրները՝ 1. «Բնական գիտություն»՝ «Աստղաբաշխություն», «Բնաբանություն», «Բնալուծություն», «Երկրաբանություն» և «Բնական պատմություն» բաժիններով, 2. «Տեսական գիտություն»՝ «Դաստիարակություն», «Քաղաքական տնտեսություն», «Երկրագիտություն», «Առողջություն», «Արուեստ, գիտ» բաժիններով, 3. «Բնական

⁶ Տե՛ս Моль А., Социодинамика культуры . М., Прогресс, 1973, с. 37.

⁷ Տե՛ս «Հայ պարբերական մամուլի պատմություն», XVIII-XIX դարեր, հ. 1, Գալիթ, 2006, էջ 68:

⁸ Հ. Գրիգորիս Վ. Գալենքարեան, Պատմություն հայ լրագրության, Վիեննա, Միսիթարյան տպարան, 1893, էջ 61:

վճռական քայլը. «հյուրասիրաբար» իր էջերում տեղ է հատկացնում հայ մտավորականության ամենատարբեր բնագավառի ներկայացուցիչներին, որոնք ոչ միայն Միսիթարյան միաբանության անդամ չէին, այլև նույնիսկ հոգևորական չէին, անգամ անդամակցում էին հակընդդեմ կրոնական որևէ կազմակերպության: Եթե **երկրորդ շրջափուլում** «Բազմավեպի» հիմնական ուղղվածությունը փոփոխվում է՝ ավելի հակվելով դեպի կրոնականությունը՝ ընդհանուր առմամբ, սակայն, նյութերի բազմազանությամբ մրցունակ մնալով ժամանակի աչքի ընկնող հանդեսների շրջանում, ապա **երրորդ շրջափուլում** ծրագրային փոփոխությունը կրում է խորքային բնույթ. «բնական գիտությունը բաժինը կնվազի. զարկ կը տրվի տեղագրական նյութերու», ինչպես նաև «թարգմանությամբ՝ դասական հեղինակներու»: Ընդհանուր առմամբ՝ «Բազմավեպի» ուղղվածությունը բխեցվում է կրոնականությունից:

5. «Բազմավեպը» նպատակ ունեւր բավարարել բազմաշերտ ընթերցողների պահանջները: Ըստ այդմ այն զետեղում էր հասարակական-քաղաքական, պատմաբանասիրական, գիտական ու արտադրական, առևտրային ու երկրագործական խնդիրների վերաբերյալ հողվածներ, տնտեսագիտական ուսումնասիրություններ: Հանդեսի էջերը զբաղեցնում էին նաև բանասիրական նյութերը, առակներն ու խրատանիները: Գերակշիռ տեղ էին զբաղեցնում գրական ու թարգմանական նյութերը, բանավեճերը:

6. «Բազմավեպը» իրականացրեց մշակութային երկու կարևոր գործողություն. նախ՝ կամրջեց հայ հին և միջնադարյան մշակույթը նոր ժամանակների գրականության ու արվեստի հետ և ապա՝ հանդեսում ձևավորվեցին ու նոր կերպարանք ստացան հայկական կլասիցիզմի և հայկական ռոմանտիզմի գեղագիտական հայացքները, սկզբունքներ, որոնք այս կամ այն չափով գերիշխող մնացին ամբողջ 19-րդ դարում:

7. Անուրանալի է «Բազմավեպի» կատարած բացառիկ կարևոր դերը հայագիտության համար: Անգամ այսօր գաղութահայ, արևմտահայ գրականության, պատմության և մշակութային արժեքների հետազոտության համար անփոխարինելի վավերագրական և աղբյուրագիտական հսկայական նյութեր կան զետեղված հանդեսի էջերում:

8. Մեծ էր «Բազմավեպի» ներդրումը անցած սերունդների ստեղծագործական ժառանգության պահպանման, զարգացման և փոխանցման հարցում:

9. «Բազմավեպի» հատորները կարևոր արժեք են ներկայացնում հայ հոգևոր մշակույթի ըմբռնման համար: Հարկավ, մշակութաստեղծման գործընթացը նոր որակներ էր ստացել անտիկ ու եվրոպական գրական կոթողային երկերի թարգմանության և դրանք հայկական միջավայրում վերարժևորելու շնորհիվ: Իսկ ընդհանուր առմամբ՝ «Բազմավեպի» առանձնահատկությունն այս առումով կրկին նրա՝ գաղթաշխարհի իրականության ներկայացուցիչը լինելու մեջ էր:

10. Ուշագրավ է, որ «Բազմավեպի» էջերում փորձ է արվել միմյանց համադրել և հավասարակշռել մի կողմից՝ գրաբար, մյուս կողմից՝ աշխարհաբար լեզուները: Այսպես, հանդեսում հաճախ հրապարակվում են հողվածներ և ուսումնասիրություններ, որոնք գրված են գրաբարով: Գրական թարգմանությունների մեծ մասը դարձյալ գրաբար է: Անշուշտ, այս համագամաքը իր բացատրություններն ունի: Պատճառներից կարելի է առանձնացնել հատկապես երկուսը: Նախ՝ 19-րդ դարի 40-50-ական և մինչև 60-ականների կեսերը գրապայքարը դեռևս շարունակվում էր և չէր հասել վերջնական հանգրվանի: Երկրորդ՝ «Բազմավեպի» համար ավելի էական, սկզբունքային մշակույթում ունեւր լեզվի անխառնություն հիմնախնդիրը: Հատկապես բանաստեղծության մեջ դա պարտադիր պայման էր, իսկ դեռևս չմշակված ու չկանոնակարգված արևմտահայ աշխարհաբարը չէր կարող բավարարել դասականության պահանջները: Դրան հակառակ՝ գրեթե առանց բացառության աշխարհաբարով են գրված «Բազմավեպի» գիտական, աշխարհագրական, պատմագիտական, մշակութային հողվածները:

ղումներ: Հետաքրքիրն այն է, որ Լամարթինի բանաստեղծության գրաբար թարգմանությունն ուղեկցվում է աշխարհաբար փոքրիկ առաջաբանով, որը դարձյալ ապացուցում է մեր ասածի իրավացիությունը, այն է թե՛ բանաստեղծության համար նախընտրելին գրաբարն է, իսկ իմացության, գիտելիքների տարածման խնդրում՝ աշխարհաբարը: Բանաստեղծության հանդեպ այդպիսի լեզվական «երկկենցաղությունը» երբեմն չի վերաբերում նաև «ռամկական և գավառացի բարբառներով» ստեղծագործող բանաստեղծներին:

Տիրապետելով եվրոպական մի շարք հին ու նոր լեզուների՝ նոր ժամանակներում Մխիթարյաններն արեցին այն, ինչը համեմատելի է միմյայն հինգերորդ դարի երանելի թարգմանիչների սխրանքի հետ: Եվ եթե շարունակենք զուգահեռը, ապա պետք է ասել (և դա, կարծում ենք, չափազանցություն չի լինի), որ եթե Ոսկեդարի թարգմանությունները հիմք դարձան հայ գրականության և պատմագրության նմանը չունեցող թռիչքի, ապա Մխիթարյանների թարգմանությունները նախապատրաստեցին ու կայուն ուղու վրա դրեցին հայ նոր գրականությունը՝ առաջին կլասիցիստներից (Արսեն Կոմիտաս Բագրատունի...) և առաջին ռոմանտիկներից (Ղևոնդ Ալիշան, Մկրտիչ Պեշիկաշյան, Պետրոս Դուրյան...) մինչև Դանիել Վարուժան ու Սիամանթո, Միսաք Մեծարենց ու Ռուբեն Սևակ: Ուստի տասնամյակների հեռվից տխուր, հաճախ նաև զավեշտական են թվում այն քննադատությունները, որոնք ժամանակին հնչել են Մխիթարյանների թարգմանությունների կամ գրական այս կամ երևույթին տրված գնահատականների առթիվ:

ԵՋՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Հայ պարբերական մամուլի ժառանգության համապատկերում իր ուրույն տեղն ու դերն ունի Վենետիկում Մխիթարյան միաբանության կողմից հրատարակված «Բազմավեպ» հանդեսը: Դրա գլխավոր առանձնահատկությունն այն էր, որ այն ստեղծվում էր նախորդների («Տարեգրություն», «Եղանակ Բյուզանդյան» և «Դիտակ Բյուզանդյան») փորձառությունը նկատի ունենալով:

2. Հանդեսը, լինելով զանգվածային լրատվամիջոց, գործի բերումով կոչված էր իրացնելու իր առաջնահերթ գործառնությունները՝ ընթերցող հանրությանը տեղյակ պահել աշխարհում ընթացող կարևոր իրադարձություններին, իրազեկ դարձնել բնական և հունանիտար գիտությունների նվաճումներին, արվեստի և մշակույթի նորություններին, հասարակական առավել կարևոր խնդիրներին ու իրողություններին և բավարարել հայ նոր ընթերցողի հետաքրքրությունները:

3. Հատկանշական է, որ «Բազմավեպի» առաջին խմբագիրներն ու աշխատակիցները ջանացել են ամենից առաջ արձագանքել աշխարհիկ հայ ընթերցողների հրատապ պահանջներին: Միայն դրանով կարելի է բացատրել հանդեսի լեզվական քաղաքականությունը. ի տարբերություն ավելի վաղ հրատարակված պարբերականների՝ «Բազմավեպի» լեզուն «ռամկախառն» աշխարհաբարը չէ, այլ 19-րդ դարի առաջին տասնամյակների արևմտահայ մտավորականության գործածած լեզուն, թեպետև այն դեռ ամբողջապես չէր կազմավորվել որպես գրական լեզու:

4. Ընդհանուր առմամբ՝ 1843-1880 թվականներին «Բազմավեպ» ունեցել է **փոխակերպման երեք շրջափուլ**՝ 1843 և 1849 թթ., 1863 թ., 1873 թ. **առաջինը** կապված է Գաբրիել Այվազովսկու և Ղևոնդ Ալիշանի անունների հետ, **երկրորդը**՝ Գրիգոր Գեղալյանի, իսկ **երրորդը**՝ Հ. Արսեն Սուքրիի անունների հետ:

Ձարգացման **առաջին շրջափուլում** պարբերականը հանդես է գալիս «մեծապես ճշգրտված ներքին քաղաքականությամբ»: Իսկ շուտով՝ նաև իրականացնում հաջորդ

տեղեկությունը՝ «Պատմություն», «Աշխարհագրություն», «Ազգային տեղեկություն», «Բարոյական խրատ, պատմություն», «Բանաստեղծություն: Առակ» բաժիններով:

Իսկ արդեն 1849 թվականից, երբ «Բազմավեպի» խմբագիր է դառնում Ղևոնդ Ալիշանը, հանդեսը ենթարկվում է կառուցվածքային որոշակի փոփոխությունների: Այս անգամ այն արդեն բաղկացած էր հինգ խորագրերից՝ 1. «Բարոյական»՝ «Աշխարհադիտակ», «Յաղագս մարդկային պարտուց», «Դաստիարակություն», «Նկարագիր», «Բարոյական պատմություն: Առակ» բաժիններով, 2. «Բանասիրական տեղեկություն»՝ «Ազգային տեղեկություն», «Լուր և տես Հայաստանի», «Բանաստեղծություն», «Մատենագիտություն», «Աշխարհագրություն», «Հնախօսություն», «Պատմություն» բաժիններով, 3. «Տնտեսական գիտություն»՝ «Առողջութեան կանոններ», «Արուեստ և ճարտարություն», «Երկրագործություն և պարտիզպանություն» բաժիններով, 4. «Բնական գիտություն»՝ «Բնական պատմություն», «Բուսաբանություն», «Բնաբանություն», «Տոմարագիտություն», «Աստղաբաշխություն» բաժիններով, 5. «Սանր գիտելիք»: Այսուհետ լրագիրը տասնամյակներ շարունակ պահպանում է բաժինների այս կառուցվածքը, իսկ կատարվող փոփոխությունները թելադրվում են ժամանակի պահանջներով:

Ընդհանուր առմամբ՝ 1843-1880-կաններին «Բազմավեպ» ունեցել է **փոխակերպման երեք շրջափուլ**՝ 1843 և 1849 թթ., 1863 թ., 1873 թ.: Առաջինը (1843 և 1849) կապված է Գաբրիել Այվազովսկու և Ղևոնդ Ալիշանի անունների հետ, երկրորդը՝ Գրիգոր Գեղալյանի, իսկ երրորդը՝ Հ. Արսեն Սուքրիի:

Ձարգացման երկրորդ շրջափուլում «Բազմավեպի» հիմնական ուղղվածությունը նկատելիորեն փոփոխվում է և ավելի հակվում կրոնականությանը՝ ընդհանուր առմամբ, սակայն, նյութերի բազմազանությամբ մրցունակ մնալով ժամանակի ակնառու հանդեսների շրջանում: «Բազմավեպը» շարունակում է հիմնադիրների լավագույն ավանդույթները՝ զարգացնելով դյուրամատչելի լեզվի, տեղեկատվական բաժնի, աշխարհագրական ակնարկների և պատմաբանասիրական նյութերի, հայ իրեն ձեռագիր մատյաններից քաղված վավերագրերի, անգամ ռամկական երգերի, տնտեսական հետաքրքրությունների, արևմտյան մշակույթի ներկայացուցիչների մասին տեսությունների քաղաքականությունը: Այս ժամանակներից ակնհայտ է դառնում, որ «Բազմավեպի» խմբագիրների համար կարևոր նշանակություն է ձեռք բերում հայ առևտրական-վաճառականների հետաքրքրվածությունը արդյունաբերության, շուկայական հարաբերությունների և տնտեսական բնույթի այլ տեղեկատվությամբ: Այսպես, աշխարհագրական ակնարկների և լուրերի թեմատիկան ավելի քան որոշակիորեն ցուցանում են «Բազմավեպի» խմբագրական քաղաքականության փոխակերպությունը:

Իսկ արդեն երրորդ շրջափուլում ծրագրային փոփոխությունը խորքային բնույթ էր կրում. «բնական գիտության բաժինը կնվազի. զարկ կը տրվի տեղագրական նյութերուն», ինչպես նաև «թարգմանությամբ՝ դասական հեղինակներուն»: Նման «ներքին շրջաբեկումը» նկատի ուներ Մ. Շանաշյանը, երբ գրում էր. ««Բազմավեպ»-ի կենտրին մէջ նոր շրջան մը կը բացուի 1873-ին, առաջ կու գայ զգալի յեղաշրջում մը միւթերու ընտրութեան եւ դասաւորումի: Ամսաթերթը կը փոխուի Եռամսեայ թերթի. կը սկսին ուսումնասիրուիլ նախնեաց կեանքն ու գործերը, կարթնամայ հմութեան սէրը համեմատ եւրոպական ազգերու յառաջադէմ հանդէսներու նկարագրին»⁹: Նշենք, որ «Բազմավեպ» այժմ դառնում է եռամսյա թերթ՝ միևնույն ժամանակ փոփոխելով բովանդակային կառույցը, որն արդեն բաղկացած էր հիմնական վեց բաժիններից՝ 1. Հանդես բարոյական, 2. Հանդես հայկական, 3. Հանդես բնական, 4. Հանդես աշխարհագրական, 5. Հանդես կենսագրական, 6. Հանդես աշխարհագրական: Չնայած նման փո-

⁹ Հ. Մեսրոպ Շանաշյան, «Բազմավեպ»ի յոթելեանը եւ անոր նշանակությունը, Գեղուհի, 1947, էջ 4:

խակերպումներին՝ հանդեսը հիմնականում հավատարիմ է մնում այն սկզբունքներին ու ծրագրային դրույթներին, որոնք արծարծվում են «Բազմավեպի» առաջին տեսարակի հատուկ նախաբանի մեջ (կատարվող փոփոխությունները ևս թելադրված էին ժամանակի պահանջներին): Ընդհանուր առմամբ, «Բազմավեպի» թեմատիկան ձեռք է բերում արխայիկ բնույթ, իսկ նյութերի ընտրությունը, ակնարկների կառուցվածքը, ինչպես նաև հանդեսի ամբողջ ուղղությունը բխեցվում է կրոնականությունից:

Չրապարակման ժամանակներից մինչև օրս «Բազմավեպ» հայագիտական հանդեսը կարևոր ներդրում է կատարել գիտության և կրթության գրեթե բոլոր ոլորտներում իր լուսավորական ըմբռնումները հասցնելով հայության ամենատարբեր շերտերին: Ընդհանուր առմամբ «Բազմավեպի» նպատակներից մեկը գործնական նշանակության խնդիրների լուսաբանումն է:

Երրորդ ենթազվիսում («**«Բազմավեպի» գնահատությունը հայ մամուլում (հարցի պատմությունը)**») ընդհանուր գծերով ներկայացված են «Բազմավեպի» մասին հայ մամուլում հնչած կարծիքները:

Բնական է, որ Մխիթարյանների և նրանց գործունեության վերաբերյալ կարծիքները պետք է լինեին տարբեր՝ թե՛ դրական և թե՛ բացասական դիրքորոշումներով: Այս առումով ուշագրավ է Նալբանդյան-Այվազովսկի հակամարտության պատմությունը: Հետաքրքիրն այստեղ այն է, որ Մխիթար Սեբաստացուն Մխիթարյաններին հակադրող գնահատություններում Մ. Նալբանդյանի և Գ. Այվազովսկու դիրքորոշումները գրեթե նույնական են: Մ. Նալբանդյանի քննադատության առանցքը Մխիթարյանների՝ ճիզվիտական սահմանադրություն որդեգրելու հանգամանքն է: Նույնն է պարագան նաև Այվազովսկու գնահատությամբ: Ավելին, նա այդ հարցում ավելի անողոր է, քան ազատական Նալբանդյանը: Դրական վերաբերմունքն ու վերագնահատությունները հստակ կձևակերպվեն արդեն մեկ դար անց: Այս առումով ուշագրավ են «Ռագմիկ», «Շարժում», «Մասիս», «Մարմարա», «Հայրենիք» և «Յառաջ» թերթերի գնահատականները:

Ամփոփելով հայ մամուլի գնահատությունները՝ տրված «Բազմավեպին», կարելի է ասել, որ, հիրավի, հրապարակման ժամանակներից հանդեսն անուրանալի ներդրում է կատարել գիտության և կրթության գրեթե բոլոր ոլորտներում իր լուսավորական ըմբռնումները հասցնելով հայության ամենատարբեր շերտերի: Սակայն այս գնահատությունների մեջ, մեր կարծիքով, պակասում է երկու կարևոր հանգամանքի նշում. առաջին՝ Մխիթարյան միաբանությունն իր տպագիր օրգանով հուսալիորեն կամրջեց հայ հին և միջնադարյան գրականությունն ու մշակույթը նոր ժամանակների գրականության ու արվեստի հետ, և երկրորդ, որ պակաս կարևոր չէ, հանդեսում ձևավորվեցին ու նոր կերպարանք ստացան հայկական կլասիցիզմի ու հայկական ռոմանտիզմի գեղագիտական հայացքները, այսինքն՝ սկզբունքներ, որոնք այս կամ այն չափով գերիշխող մնացին ամբողջ 19-րդ դարում:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ՀՈԳԵՎՈՐ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԵՎ ԱՋՊԱՅԻՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Ատենախոսության երկրորդ բաղկացած է բաղկացած է չորս ենթազվիսից:

Առաջին ենթազվիսում («**Հոգևոր մշակույթի ըմբռնումը**») լուսաբանված է «Բազմավեպի» համաժիրում քննարկման թեմա դարձած հոգևոր մշակույթի ըմբռնումը:

«Բազմավեպի» հատորները կարևոր արժեք են ներկայացնում հայ հոգևոր մշակույթի ըմբռնման համար: Հարկավ, մշակութաստեղծման գործընթացը նոր որակներ

նակների, խմբագրությունների, հրատարակչությունների իրավունքներն ու պարտականությունները: Որոշ երկրներում գրական քաղաքականությունը գործում է գրողների, քննադատների, գրական ուղղությունների, մամուլի շուրջ հավաքված միությունների կամ կազմակերպությունների միջոցով: Իշխանությունը գրական քաղաքականության միջոցով արտահայտում է իր գաղափարներն ու պահանջները և դրանց իրագործման համար միավորելով ստեղծագործողներին՝ նպաստում, որպեսզի գրականությունը դառնա հասարակական ուժ՝ իր թելադրած օրենքներով: Բացարձակապետությունների դարաշրջանում պետությունը ձգտում էր իրեն ենթարկել հասարակական կյանքի բոլոր ոլորտները, և գրական քաղաքականությունը՝ դառնալով իշխանությանն անհրաժեշտ գործիքներից մեկը, ճնշում էր գրողների՝ ազատ ստեղծագործելու հնարավորությունը: Պաշտոնական ոճից շեղումը կամ արգելվում էր, կամ համարվում ցածրարժեք ստեղծագործություն (այդ իմաստով հիշատակելի են Կոռնելի «Սիդի» դասապարտումը, երբ դրամատուրգը որոշակիորեն շեղվել էր կլասիցիզմի սկզբունքներից, և Վ. Հյուլզոյի «Էռնանիի» հետ կապված պատմությունը, երբ կլասիցիստական թատրոնին սովոր թատերական հասարակության համար անպրոպի պես ճայթեց ռոմանտիզմի մուտքը):

Խոսելով հանդեսի գրական քաղաքականության մասին՝ դարձյալ հարկ է առանձնացնել մշակութային այն կերպը, որ նա մատնանշում է գրական քաղաքականության որոշակի դրույթներով ու նպատակներով: Առաջին իսկ համարներից «Բազմավեպը» մեծ տեղ է հատկացնում և՛ թարգմանական, և՛ հայերենով ստեղծվող գրականությանը: Կրթության և դաստիարակության խնդիրներում գիրք ու գրականությունն ամուրամալի դերակատարություն ունեն: Եթե «ազգասիրությունը նախ մըն է, ասոր դեկը խոհեմությունը պիտի ըլլա»¹³, իսկ գիրքն ու գրականությունը մարդու խոհեմությունն ու խոհականությունը ձևավորելու ամենաօգտակար միջոցներն են. համոզված են հանդեսի հոգվածագիրները:

Երկրորդ ենթազվիսը՝ «**«Բազմավեպի» թարգմանական քաղաքականությունը**», նվիրված է հանդեսի ծավալած գրական-թարգմանական գործունեությանը՝ այն դիտարկելով ժամանակի հոգեմտավոր մթնոլորտի համաժիրում:

Գրական առաջին գործը, որ թարգմանաբար տպագրում է «Բազմավեպը», Լամարթինի «Ներդաշնակություն» ժողովածուից «Երեխային արթնացնելու աղոթք» բանաստեղծությունն է: Այն թարգմանված է գրաբարով: Ինչպես նշեցինք, բանաստեղծությունների թարգմանության համար «Բազմավեպի» նախընտրած լեզուն գրաբարն է, և այդ նախընտրությունը սկզբունքային է այն առումով, որ, ըստ Մխիթարյան հայրերի, բանաստեղծությունը վսեմ արվեստ է, աստվածների լեզու, ուստի և այդ լեզուն չէր կարող լինել դեռևս անմշակ աշխարհաբարը, որովհետև այն լի էր ռամկաբանություններով և օտարաբանություններով: Չմոռանաք նաև նշել, որ նրանց գրական պատկերացումներում դասականությունը (կլասիցիզմը) գերիշող դիրքեր ուներ ընդհուպ մինչև 19-րդ դարի 60-ական թվականները, իսկ դասականության համար գրականության (մասնավորապես՝ բանաստեղծության և դյուցազներգության մեջ) լեզվի խնդիրը չափազանց էական էր: Լեզուն պետք է լինեի «անխառն» և «ազնվական»: Լեզվի հարցում այդպիսի «բժախնդրություն» էին ցուցաբերում առաջին կլասիցիստները՝ Բուալոն, Ռասինը, Կոռնելը և այլք: Նույն վերաբերմունքն առկա է նաև Մխիթարյանների տեսաբանների աշխատություններում:

Իհարկե, «Բազմավեպը» բանաստեղծություններ է հրապարակում նաև աշխարհաբարով, ինչպես, օրինակ, Դևոնդ Ալիշանի գործերը, սակայն դրանք, կարծում ենք, ավելի շուտ հեղինակային նախածեղծություններ են, քան ընդհանուր սկզբունքից շե-

¹³ Տե՛ս «Բազմավեպ», 1847, թիվ 3, էջ 29:

տավոր պայմաններ չունեցող հայ մտածողները գործում էին գաղթօջախներում: Այսու «Բազմավեպի» ինչպես ազգային, այնպես էլ հոգևոր-մշակութային քաղաքականությունը հասկանալու համար հարկ է իմանալ նաև մասնավորապես Վենետիկում տիրող գրական այն մթնոլորտը, որում գործում էին Մխիթարյանները:

Վենետիկում և քաղաքին հարակից մյուս շրջաններում, սկսած 18-րդ դարի վերջերից, Լուսավորականությունը անհամեմատ ցայտուն արտահայտություն ուներ, քան Իտալիայի մյուս մարզերում: Յենց Վենետիկում լայն տարածում ստացավ լուսավորական լրագրությունը. այստեղ է, որ ամենից ակտիվ են գործում 18-րդ դարի իտալական գրական խոշոր քննադատները (Ֆ. Ալգորեստի, Ս. Բոտինելլի, Գ. Գոցցի և այլն): Վենետիկում էին գործում Եվրոպայում հայտնի ամենադեմոկրատական թատրոնները, որտեղ տրված ներկայացումների բովանդակությունն ուներ խիստ ազգային բնույթ, և որոնք հիմք դրեցին նոր Իտալիայի ազգային գաղափարաբանությանն ու դրամատուրգիային: Միաժամանակ պետք է նկատել, որ վենետիկյան Լուսավորականությունն առանձնապես աչքի է ընկնում ո՛չ համարձակությամբ, ո՛չ էլ արմատականությամբ: Վենետիկյան լուսավորիչները սովորաբար խուսափում էին սոցիալական, քաղաքական, տնտեսական սուր խնդիրներ շոշափելուց, որոնք շատ ավելի էին կարևորվում Իտալիայի մյուս խոշոր կենտրոններում: Նրանց հայացքներն աչքի էին ընկնում ընդգծված պահպանողականությամբ: Նշված հատկանիշների նշումով ցանկանում ենք ընդգծել Մխիթարյանների, մասնավորապես՝ «Բազմավեպի» դիրքորոշումների ընդհանուր ուղղությունը. հանդեսը պահպանողական էր ոչ միայն այն պատճառով, որ հրատարակիչները հոգևորականներ էին, այլև այդպիսին էր Վենետիկում տիրող քաղաքական մթնոլորտը: Այսինքն՝ «Բազմավեպի» հետաքրքրությունները մեծավ մասամբ համահունչ էին վենետիկյան մտայնություններին:

Ահա գրական, քաղաքական այսպիսի միջավայրում և հանգամանքներում էր գործում Մխիթարյանների միաբանությունը 19-րդ դարի 40-ական թվականներին, և նրա հրատարակած լրագիրը կամա-ակամա անտարբեր չէր կարող մնալ երկրում կատարվող իրադարձություններին, տիրող հասարակական տրամադրություններին: Մամվանդ բազմաթիվ էին քաղաքական, սոցիալական այն խնդիրները, որոնք նման էին Չայաստանում տիրող իրավիճակին՝ և՛ օտար զավթիչների լծի տակ կեղծավոր երկու ազգերի ճակատագրերը, և՛ ազգային ազատագրության գերակա խնդրի հրամայականը: Մի խոսքով՝ իտալական, մասնավորապես վենետիկյան հոգևոր և քաղաքական կյանքի սկզբունքների ու Միաբանության հայացքների նմանությունը սոսկ հայ հոգևորականների կրավորական պահվածքի հետևանք չէր, այլ խորապես կապված էր հայ իրականության տիրապետող վիճակի և դրանից ածանցվող նույնանման խնդիրների հետ:

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

«ԲԱԶՄԱՎԵՊԻ» ԳՐԱԿԱՆ-ԹԱՐԳԱՆԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ատենախոսության երրորդ՝ եզրափակիչ գլուխը բաղկացած է երկու ենթագլխից: Առաջին ենթագլուխը՝ «**«Բազմավեպի» գրական քաղաքականությունը**», վերաբերում է հայ իրականության մեջ հանդեսի ծավալած գրական հատուկ քաղաքականության լուսաբանմանը:

Գրեթե բոլոր հանրագիտարաններում գրական քաղաքականությունը համարվում է պետական-քաղաքական և հասարակական համակարգի մի օղակ, որը, համաձայն սովորյալ պետության մեջ գոյություն ունեցող դրույթների և մշակվող գրաքննական օրենքների, ձեռք է բերում իրավական-կազմակերպական բնույթ և սահմանում հեղի-

եր ստացել անտիկ ու եվրոպական գրական կոթողային երկերի թարգմանության և դրանք հայկական միջավայրում վերարժևորելու շնորհիվ: Իսկ ընդհանուր առմամբ՝ «Բազմավեպի» առանձնահատկությունն այս առումով կրկին նրա՝ գաղթաշխարհի իրականության ներկայացուցիչը լինելու մեջ էր: Չիրավի, Մխիթարյան միաբանությունը գաղթօջախներում գործող հայ հոգևոր-մշակութային, «տարաշխարհիկ» փառավոր կենտրոններից մեկն է: Եվ էլ ավելի արժևորելի է, որովհետև միաբանությունն ի վերջո իր տեսակի մեջ եզակի հոգևոր-կրոնական կազմակերպություն էր, սակայն հանգամանքների բերումով մեծագույն ծառայություններ մատուցեց նաև «աշխարհիկ մշակույթին»՝ ուղեցույց լինելով կյանքի ամենաբազմազան ոլորտների (գրականության, հայագիտության, պատմագրության, աշխարհագրության, երկրագործության և այլն) համար:

Մխիթարյան միաբանության, մասնավորապես «Բազմավեպ» հանդեսի պարագայում հարկ է ընդգծել գործիչների՝ կաթոլիկ լինելու հանգամանքը: Այդ դեպքում խնդիրը փոքր-ինչ հեշտանում է, որովհետև «Կաթոլիկ եկեղեցին ընդունում է Քրիստոսի մեջ Աստուծո և Մարդու բացարձակ հավասարակշռության գաղափարը, բայց Միջնադարում այն ընկալում է նախևառաջ Նրա Աստվածային հիպոստասի տեսանկյունից... Այս տեսանկյունից արվեստի և գրականության հիմնական սյուժեն է՝ Աստուծո կյանքը, տառապանքը, մահը: Ամեն ինչ պտտվում է սյուժետային այս առանցքի շուրջը՝ զարգացնելով իմաստային այս կամ այն կողմը...»¹⁰, - մշակույթ-կրոն հարաբերության առնչությամբ գրում է պրոֆ. Յ. Էդոյանը:

Չեստիջնադարյան ժամանակներում հոգևոր հասկացության ըմբռնումը գալիս է Վ. ֆոն Յունբուրգի պատմափիլիսոփայական գաղափարներից: Ըստ նրա պատմագիտական տեսության՝ համաշխարհային պատմությունը ոգու գործության գործունեության արդյունք է, մի ուժ, որ գտնվում է իմացության սահմաններից դուրս և դրսևորվում է առանձին անհատների ստեղծագործական ունակություններով և անձնական ջանքերով: Այս համագործակցության պտուղները կազմում են մարդկության հոգևոր մշակույթը¹¹:

Այս առումով հատկանշական է Ղևոնդ Ալիշանի ներդրումը, ով «Բազմավեպի» հրատարակության հենց սկզբից՝ իր՝ խմբագիր լինելու ժամանակ և անգամ հետո, հանդես է եկել ազգանվեր բուռն գործունեությամբ: Այսպես, «հայրենիքի» ալիշանյան ըմբռնումը հստակ է և անառարկելի. «Ուր քաղաքացիք չիք՝ չկան և հայրենիք... բուն իսկ հայրենիք մեք ենք, անձն յուրաբանչյուր, և լավությունք մեր նեցուկք են մորա»¹², - գրում է նա:

Պատմությունը, ըստ «Բազմավեպի» խմբագիրների, վերագրվում էր Լույս, դեպքերի ու դեմքերի չիմաստավորված շարան ու անցուղարձ չէ, այլ գոյության էությունը, առօրյա հարընթացում չընմարվող շերտը: Ասել է թե՛ պատմության նրա ըմբռնումը հիմնվում է պատմական գործընթացի՝ իբրև միասնական համակարգի հիմնադրույթի վրա:

Ի մի բերելով վերոշարադրյալը՝ նկատում ենք, որ մշակույթը հոգևոր կյանքի հարաբերությամբ հանդես է գալիս որպես յուրացված և առկա մտքի անհրաժեշտ ատաղձ, որպես բովանդակություն: Այսինքն՝ որպես մտքի ատաղձ՝ մշակույթը նախադրյալ է, իսկ միտքն այն է, ինչ նրանից ստեղծում են. մտածողությունը դրանով դառնում է մշակույթի կազմավորման եղանակ: Այլ կերպ ասած՝ մշակույթը իրականությանն ուղղված ինտելեկտուալ հայացք է՝ այդ իրականությունը կատարելագործելու

¹⁰ Էդոյան Յ., Շարժում դեպի հավասարակշռություն, էջ 26:

¹¹ Степ Гумбольдт В., Язык и философия культуры. М. 1985.

¹² «Բազմավեպ», 1845, թիվ 22, էջ 343:

մղումով: Իսկ քրիստոնեությունը, մասնավորապես Մխիթարյան միաբանության ըմբռնմամբ, որ հաճախ տարփոխվում է «Բազմավեպի» էջերում, այլ բան չէ, քան մարդու և իրականության կատարելագործման վարդապետություն: «Բազմավեպի» հեղինակները լավագույնս տիրապետում էին աստվածաբանական մտքի տեղաշարժերին ու փոխակերպություններին:

Երկրորդ ենթագլխում (**«Ազգային հիմնախնդիրների ըմբռնումը «Բազմավեպում»**) վեր է հանվել ազգային հիմնախնդիրների՝ «Բազմավեպի» ըմբռնումը:

Ընդհանուր առմամբ՝ «ազգասիրություն» և «հայրենասիրություն» հասկացությունները «Բազմավեպի» բառապաշարում հոմանիշներ են: Նման ազգասիրության օրինակ, ըստ հանդեսի, հինգերորդ դարի մեր թարգմանիչներն էին, որոնք, արհամարհելով ամեն կարգի դժվարություններ, անգամ անհանդուրժողականություն իրենց անծի հանդեպ, նվիրական գործ էին անում՝ շահի ոչ մի ակնկալություն չունենալով: Սա, ըստ «Բազմավեպի», արդեն ազգասիրության բարձրագույն աստիճանն է: Սակայն «Բազմավեպի» կարծիքով՝ ազգասիրությունը (նույնն է թե՛ հայրենասիրությունը) ամենևին էլ բնական զգացում չէ, ինչպես ընդունված է կարծել. այն նախառաջ դաստիարակության խնդիր է:

Ըմբռնելով հասարակական նորացումների համաշխարհային ընթացքը՝ «Բազմավեպի» հեղինակները չէին կարող չանդրադառնալ նաև տնտեսական խնդիրներին: Այս առումով նշանակալի են երկրագործության հիմնախնդիրներին վերաբերող հոդվածները: «Բազմավեպի» հեղինակները գիտակցում էին, որ կապիտալիստական հարաբերություններն արդեն գերիշխող են եվրոպայում՝ հատկապես շնորհիվ արդյունաբերության զարգացման, սակայն միաժամանակ գիտեին, որ Հայաստանն ունի միայն ագրարային զարգացման հնարավորություններ: Այդ պատճառով հանդեսի հոդվածագիրները, չանտեսելով բնական գիտությունների դերը, նախառաջ անհրաժեշտություն էին համարում երկրագործական գիտելիքների ուսուցանումը (ակնարկներ շերամապահության, ճակնդեղի մշակման, երկրագործական զանազան բույսերի, արտեզյան ջրհորների, ընտանի թռչունների մասին):

Մխիթարյանների գործունեության ամենահարուստ ծիրը մատենագիտական գործունեությունն է: Տասնյակ էջեր կարող է կազմել միայն նրանց հայտնաբերած և հրատարակած մատյանների ցանկը: Դա նրանց լուսավորչական-կրթական գործունեության ամենացայտուն կողմն է: Իտալական գրականության պատմաբանի խոսքով՝ «հունական և հռոմեական հնության փոխարեն ազգային հնության» փնտրտուքը ուզեչնչում էր նրանց երևակայությունը, լցնում ազգային հպարտությամբ, հուզավառում միստիկայի հասնող հայրենասիրական-կրոնական ջերմեռանդությամբ: Նախնիների հերոսական անցյալը վերակենդանանում էր ոչ միայն հին մատյաններում հայտնաբերված քաջարի իրաբարձություններով և պատմություններով, այլև առաջացնում անկասելի մի ցանկություն՝ գեղարվեստի միջոցներով կերպավորել դրանք:

Երրորդ ենթագլուխը (**«Հայոց լեզվի խնդիրների արծարծումը «Բազմավեպում»**) նվիրված է «Բազմավեպում» հայոց լեզվի հիմնախնդրի լուսաբանմանը:

«Բազմավեպի» լեզուն առանձին ուսումնասիրության նյութ է: Մի բան, սակայն, անտարակուսելի է. դժվար է գերազանհատել արևմտահայ գրական լեզվի մշակման գործում հանդեսի կատարած անուրանալի դերակատարությունը: Հրապարակման պահից սկսած՝ տասնամյակների ընթացքում աստիճանաբար փոփոխվում է այդ լեզուն և ազատվելով գրաբարայնությունից ու «ռամկաբանություններից»՝ ավելի ու ավելի է կանոնակարգվում՝ ի վերջո դառնալով Միսաք Մեծարեցիի և Դանիել Վարուժանի ոսկեդեմիկ արևմտահայերենը:

Չմոռանա՞նք նաև նշել, որ հանդեսում հաճախ հրապարակվում են հոդվածներ և ուսումնասիրություններ, որոնք գրված են գրաբարով, իսկ գրական թարգմանություն-

ների մեծ մասը դարձյալ գրաբար է: Անշուշտ, այս հանգամանքն ունի իր բացատրությունները: Պատճառներից երկուսն ակնհայտ են: Նախ՝ 19-րդ դարի 40-50-ական թվականներին և մինչև 60-ականների կեսերը գրապայքարը դեռևս շարունակվում էր և չէր հասել վերջնական հանգրվանի: «Բազմավեպը» չէր կարող անտեսել այդ հանգամանքը, նաև այն, որ գրեթե ամենուրեք կրթությունը շարունակվում էր գրաբարով: Իսկ դա նշանակում էր, որ ընթերցողների մեծամասնությունը, եթե չասենք բոլորը, տիրապետում էր գրաբարին և ընթերցման դժվարություններ չուներ: Երկրորդ պատճառը, որ «Բազմավեպի» համար ավելի էական, սկզբունքային նշանակություն ուներ, այն էր, որ հանդեսի աշխատակիցների մեծ մասը, հատկապես գրական-թարգմանական ճիւղեր ունեցողները, կողմնորոշմամբ կլասիցիստներ էին, որոնց համար լեզվի անխառնությունը և վսեմությունը, հատկապես բանաստեղծության մեջ, պարտադիր պայման էր, իսկ նոր-նոր մշակվող, ավելի ճիշտ՝ դեռևս չմշակված ու չկանոնակարգված արևմտահայ աշխարհաբարը չէր կարող բավարարել դասականության պահանջներին: Նույնը կարելի էր ասել աստվածաբանական նյութերի թարգմանությունների լեզվի մասին. դրանք մեծ մասամբ թարգմանվում էին գրաբարով մի շատ պարզ պատճառով՝ չկանոնակարգված աշխարհաբարի երկնաստություններից խուսափելու նպատակով, հանգամանք, որ բացառված էր դարերով մշակված ու հսկայական ավանդույթներ ունեցող գրաբարում, որտեղ յուրաքանչյուր բառ և հասկացություն հասցվել էր միանշանակության և թափանցիկության:

Մինչդեռ, գրեթե առանց բացառության, աշխարհաբարով են «Բազմավեպի» գիտական, աշխարհագրական, պատմագիտական, մշակութային հոդվածները, որովհետև հանրության լայն զանգվածների համար նախատեսված նյութեր պարունակող պարբերականի նպատակը կրթական-լուսավորչական էր:

Ինչևէ, բացի դյուցազնական անցյալի արծարծման խնդրից՝ «Բազմավեպը» անչափ կարևորում է ազգային լեզվի խնդիրը և հաճախ «Ազգային խնդիր. հայոց լեզվին հնությունը» խորագրի տակ քննում է հատկապես հայերենի հնության պարագան: Գործելով եվրոպայում՝ Մխիթարյան հայրերը շատ ավելի ճշմարիտ ընթացքի մեջ էին տեսնում մարդկային քաղաքակրթության առաջադիմության ուղիները և առանձնապես ուտոպիստական-սոցիալիստական հակումներ չունեին: Եվ ազգային հարցերում իրենց հավասարակշիռ մոտեցումներով, այո՛, անգամ պահպանողականությամբ, ավելի օգտակար փորձեցին լինել հայության առաջադիմությանը, քան հեղափոխական կազմակերպությունները:

Չորրորդ ենթագլուխը (**«Բազմավեպը» իտալական իրականության համատեքստում»**) նվիրված է իտալական իրականության մեջ «Բազմավեպի» ծավալած գործունեության լուսաբանմանը:

Չոգևորի, ազգային ու մշակույթի այն ըմբռնումները, որոնք կազմում են հայրենասիրության հիմքերը, շատ կողմերով անհասկանալի կմնան, եթե «Բազմավեպի» մեր ուսումնասիրման ժամանակաշրջանը (1843-1880) չդիտվի համաեվրոպական, մասնավորապես իտալական իրականության համատեքստում: Այստեղ այդ վերջին հանգամանքը կարևորում ենք, որովհետև հանդեսը հրապարակվում էր Իտալիայի խոշոր կենտրոններից մեկում՝ Վենետիկում:

Խնդիրը նույնն է հայության պարագայում: «Եվ ահա, ոգևորված դարաշրջանի մեծ գաղափարներով, հայ մտավորականները առաջադրում են երեք գործոններ՝ հայրենիք, լեզու, կրոն, որոնք պետք է իրականացնեին ազգային վերաշինության մեծ նպատակը և հետևելով նրա օրինակին՝ գնացին դեպի հայոց պատմության հնագույն դարերը»,- նկատում է ակադ. Ս. Սարինյանը: Բարդ էր այդ խնդիրը, սակայն համաեվրոպական պատմությունն ընթանում էր նորոգման ճանապարհով, և հաճախ եվրոպական կրթություն ստացած, բայց այդպես էլ հայրենիքում գործունեության նպաս-